## 6. ԱԳԱՐԱԿԱՁՈՐ (ԱՑԱՐ)

*Բոլոր այս հինգ արձանագրված հուշարձանները գտնվում են գյուղից մոտ երկու կիլոմետր արևելք, Արփա գետի ափին, բլրակի վրայի գերեզմանատանը։*



***49. ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, կանգնած է պատվանդանի վրա, գերեզմանատան հարավ-արևմտյան եզրին. քիվին և հարավային ու հյուսիսային կողերին.*

ՇՆՈՐՀԻՒՆ ԱՑ. ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԲ. ՊԱՐՈՆ ԱԹԱ⌈ԲԱԿ ՏԱՐ⌈ՍԱՅԻՃԻՍ. ԵՍ ԱԲԱՍ ՈՒ ԱՑԻ, ԵՂԲԱՐՔՍ ԿԱՆԳ⌊Ն⌋ԵՑԱՔ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ. ՄԱՐԿՈՍԻ ԵՒ ՎԱՐԴԱՑ, ՄԻՐԱՑ. ԹՎ. ։ՉԼ։ (1281)։

*Ծանոթ. Վերջին անձնանունը հնարավոր է վերծանել նաև ՎԱՐԴ կամ ՎԱՐԴԱՆ ԱՅՄԻՐԱ։*

***50. ԽԱՉՔԱՐ**, մեծ և գեղաքանդակ. ընկած է գերեզմանատան կենտրոնում. տակին 5 տող.*



Ի ԹՎ. ։ՉԾ։ (1301)
ԿԱ⌊Ն⌋ԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԵ|ԽԱՒՍՈՒԹԻ ⌊Բ⌋ԱԳՐԱ|ՏԱ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՑ ԻՒՐ| . . . . . .

***51. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, կափարչաձև, երկթեք, սրանկյուն գերեզմանատան հարավային մասում, հարավային թեքության վրա. 2 տող.*



ԹՎ. ։ՉՂ։ (1341). ՑԻՇԵՑԷՔ, ⌈ԱՑՍ⌉ Է ⌊Հ⌋ԱՆԳԻՍՏ . . . . . ԳԵՂՈՒՂԷՇ ՊԱՏԱՆԵԿԻՆ։

***52. ԽԱՉՔԱՐ**, մեծ, ընկած է գերեզմանատան մեջ. շրջանակներին և տակին 4 տող.*



ԵՍ ՋԱՆԱՂԷՍ ԵՒ |ՍԱՒՉԲԷԿՍ ԿԱՆԳՆԵՑԱՔ| ԶԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ. ՄԵՐ ՀԱՒՐՆ| ՀԷՃՈՒՊԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ.

ԹՎ. ։ՋԵ։ (1456)։

**53. ԽԱՉՔԱՐ**, *օգտագործված է որպես տապանաքար, տակին 2 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ԽՈՅԱՅԴ

ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ԽՈՑԱՅԴՈՒԿ. . . .

*Ծանոթ. Շարունակությունը հավանաբար պետք է պատվանդանի վրա լիներ, որն այժմ չկա. բայց մենք չկարողացանք շուռ տալ թիկունքն ստուգելու համար:*

## 7. ԲՈՂՈՐԱԲԵՐԴ (ԿՈՒՐԹ-ԿՈՒԼԱԳ) ԳՅՈՒՂ

**54. ԹՈՒԽ-ՄԱՆՈՒԿ** *եկեղեցու բեմի հյուսիսային կողմում.*

Յիսուսի Քրիստոսի հրամանաւ, մեք՝ Մուկրակոյ չամանաւրս կանգնեցաք
Թուխ-Մանուկ եկեղեցիս, յիշատակ հոգւոց մերոց . . .

*Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա. 40—41, Ալիշան, 179:*

**55. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *որն ագուցված է Թուխ-Մանուկի հյուսիսային խորանի գլխին:*

Թվ. :ՌՃԳ:

*Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 40: Ալիշան, 179:*

**56.** *Թուխ-Մանուկ եկեղեցու հարավային մուտքի մոտ:*

Թվ. :ՌՃԶԵ:

*Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 40, Ալիշան, 179:*

**57. ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ** *կիսավեր եկեղեցու ավազանի գլխին ագուցված խաչքարի վրա:*

Խաչս յիշատակ է Խառոնին, թվ. :ՌՃԶԹ:

*Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա. 41: Ալիշան, 179:*

## 8. ԷՐԹԻՋ ԳՅՈՒՂԱՏԵՂ

*Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ հիշատակված է Էրդիչ ձևով և 10 չափ հարկով, այժմ անբնակ է: Գտնվում է Արենի (Արփա) գյուղից հյուսիս-արևելք. գետի ձախ ափին: Գյուղատեղի մոտ կա երեք կողմերից անմատչելի մի քարաբլուր, որի վրա մնում են ամրոցի ավերակները: Արանց ներսում կան ջրամբարի և բնակարանների մնացորդներ ու ջարդված խաչքարեր, որոնք պատկանում են* XIII *դարին:*

*Գյուղատեղի մոտ կա նաև գերեզմանատուն, ուր ընկած են երկու խաչքարեր:*

**58. ԽԱՉՔԱՐ**, *վրան միայն թվականը:*

ՉԻ

:ՉԻ: (1271):